

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ  
Բ. Դեմիրխանյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Բորիս Դեմիրխանյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2017թ. հոկտեմբերի 16-18-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

«Ռոսկոսմոս» տիեզերական գործունեության պետական կորպորացիա

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

Մասնակցություն Տիեզերական ոլորտում համագործակցության հարցերով ԱՊՀ անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչների խորհրդի 8-րդ նիստին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

Տիեզերական ոլորտում համագործակցության հարցերով ԱՊՀ անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչների խորհրդի 8-րդ նիստին մասնակցություն են ցուցաբերել Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության լիազորված ներկայացուցիչները (այսուհետ՝ Կողմեր), իսկ աշխատանքը նախագահում էր «Ռոսկոսմոս» տիեզերական գործունեության պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ի. Կոմարովը:

Նիստի օրակարգի հաստատումից հետո, Կողմերն ընդգծեցին տիեզերական ոլորտում երկկողմ համագործակցության առաջադեմ անցման կարևորությունը դեպի ԱՊՀ անդամ

պետությունների բազմակողմ համագործակցություն՝ ներգրավվելով բոլոր շահագրգիռ պետություններին իրենց տիեզերական համակարգերի, տեխնոլոգիաների և վերգետնյա ենթակառուցվածքների ռեսուրսների և հնարավորությունների միավորումից շահույթ ստանալու նպատակով, ինչպես նաև հաստատեցին խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման բնագավառում համատեղ աշխատանքի իրականացման շահագրգռվածությունը՝ հաշվի առնելով Անկախ պետությունների համագործակցության հետագա զարգացման հայեցակարգով և 2020 թվականի համար նախատեսված ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության երրորդ փուլի (2016–2020թթ.) իրականացման միջոցառումների ծրագրով սահմանված առաջնահերթությունը:

Միջոցառման ընթացքում քննարկվել են 2016 թվականի հոկտեմբերի 12–16-ը (ք. Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն) կայացած Տիեզերական ոլորտում համագործակցության հարցերով ԱՊՀ անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության որոշումների կատարման ընթացքը, ինչպես նաև «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման բնագավառում համագործակցության մասին» ԱՊՀ Կոնվենցիայի և «ԱՊՀ բարձրագույն կանոնադրական մարմինների կողմից խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման բնագավառում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության մասին» Համաձայնագրի նախագծերը:

Քննարկումներ ծավալվեցին նաև Հայաստանում ներդրվող ԳԼՈՆԱՍՍ համակարգի շուրջ: Հաշվի առնելով ԳԼՈՆԱՍՍ ռազմավարական ռեսուրսի արդյունավետ օգտագործման նշանակությունը՝ Կողմերը կարևորեցին Տեղեկատվության հավաքագրման համար ունիֆիկացված կայանների (YCCN) տեղադրման միջոցով տեղեկատվության փոխանակման կազմակերպման ուղղությամբ Հայաստանում, Ղազախստանում և Բելառուսում անցկացվող աշխատանքները, որոնք Ռուսաստանի Դաշնության տարածքում տեղակայված Տեղեկատվության հավաքագրման համար ունիֆիկացված կայանների հետ միասին ապահովում են նավիգացիոն տվյալների ճշգրտությունը: Որոշվեց շարունակել Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության տարածքներում նշյալ կայանի տեղադրման նախապատրաստման աշխատանքները, ինչպես նաև ներկայացվեցին Տեղեկատվության հավաքագրման համար ունիֆիկացված 1-ին կայանի տեղադրումը և 2-րդ կայանի տեղադրման աշխատանքները Ղազախստանի Հանրապետության տարածքում:

Միջոցառման ընթացքում քննարկվել է նաև մերձերկրային տիեզերական տարածության տեխնաժին աղտոտվածության մոնիթորինգի համակարգերի մշակման շուրջ համագործակցության հարցը: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև համագործակցության ընդլայնման նպատակով՝ որոշվեց մշակել միջոցառումների ծրագիր, որն ուղղված կլինի մեծ հեռավորությամբ աստղադիտակից և տեղեկատվության վերամշակման ալգորիթմների կատարելագործումից ստացած պատկերի վերամշակման օպտիմալ մեթոդների համատեղ աշխատանքների մասնակցությանը, ինչպես նաև Վ.Համբարձումյանի անվան ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի օպտիկական գործիքի արդիականացմանն ու ինտեգրմանը: Բյուրականի օպտիկական աստղադիտակի վերազինման աշխատանքների իրականացման արդյունքում, վերջինս կներառվի մերձերկրային տիեզերական տարածությունում վտանգավոր իրավիճակների կանխարգելման ավտոմատացված համակարգի օպտիկական գործիքների ուրվագծում:

Միջոցառման շրջանակներում նախարարի տեղակալ Բորիս Դեմիրխանյանը ունեցել է մի շարք երկկողմ հանդիպումներ: Ղազախստանի Հանրապետության պաշտպանական և աէրոտիեզերական արդյունաբերության նախարարության Աէրոտիեզերական կոմիտեի («Կազկոսմոս») նախագահ Ծայմանգաբետով Էրկինի և Բելառուսի Ազգային գիտությունների ակադեմիայի պրեզիդիումի նախագահի տեղակալ Կիլին Սերգեի հետ հանդիպումների արդյունքում քննարկվել են ոլորտի զարգացման հիմնախնդիրներն, ինչպես նաև հետագա գործակցության հեռանկարները: Միջազգային տիեզերական տեխնոլոգիաների գլխավոր տնօրեն Անդրեյ Դանելյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեց գետտեղեկատվական համակարգերի հարցը, որի բաղկացուցիչ մասն է կազմում խորը ինտեգրումը ԳԼՈՆԱՍՍ-ի հիմքում:

Նիստի ավարտին Բ. Դեմիրխանյանն առաջարկեց 2018 թվականին կայանալիք Տիեզերական ոլորտում համագործակցության հարցերով ԱՊՀ անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչների խորհրդի հաջորդ նիստն անցկացնել քաղաք Երևանում, ինչը Կողմերը սիրով ընդունեցին:

• **ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ՝

**Բորիս Դեմիրխանյան**  
20.10.2017թ.